ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ 2014ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2014թվականի հուլիսի 21-ին Արմավիրի մարզի Առատաշեն գյուղական համայնքի ղեկավարի կիսամյակային հաշվետվությանը ներկա էին՝ մարզպետարանի ՏԻՄ և համայնաքային ծառայության հարցերի բաժնի պետ՝ Գոռ Հովհաննիսյանը, համայնքի ավագանու անդամներ, դպրոցի, մանկապարտեզի, գյուղապետարանի աշխատակիցներ և համայնքի 47 բնակիչներ:

ՀՀ Արմավիրի մարզի Առատաշեն համայնքի ղեկավարը ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, համայնքի ղեկավարի աշխատակազմի, ավագանու և գյուղապետարանի ենթակայության տակ գտնվող աշխատակիցների միջոցով իրականացրել է իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում իր լիազորությունները:

1. Քաղաքացիների իրավունքների պաշտպանության բնագավառում

2014թ. 1-ին կիսամյակի ընթացքում գյուղապետարան է դիմել 56 բնակիչ : Դիմումներում բարձրացվել են սոցիալական, հողային, շինարարության, ֆինանսական և այլ բնույթի հարցեր, որոնք սահմանված կարգով քննարկվել են և տրվել լուծումներ: Ընթացիկ ժամանակահատվածում գյուղապետարանում ստացվել է 57 գրություն, հղվել է 106 պաշտոնական գրություն, համայնքի բնակիչներին տրվել է 325 տեղեկանք: Գյուղապետարանը , համայնքի բնակիչների շահերը պաշտպանելու նպատակով, իր միջնորդությամբ հանդես է եկել անձնագրային բաժնում, նոտարական գրասենյակում, կադաստրային տարածքային ստորաբաժնում:

Համայնքում առաջին կիսամյակի ընթացքում կայացել է ավագանու 2 նիստ, որտեղ քննարկվել են համայնքի խնդիրներին վերաբերվող տարբեր բնույթի հարցեր և կայացվել է ավագանու 11 որոշումներ, որոնք ներկայացվել են մարզպետարան: Գյուղապետի կողմից կայացվել է տարբեր բնույթի 31 որոշում և 13 կարգադրություն, որոնք նույնպես ներկայացվել են

մարզպետարան:Գյուղապետարանը ժամանակին կազմել և ներկայացրել է բոլոր հաշվետվությունները ըստ պատկանելիության:

2. Ֆինանսների բնագավառում

Տնօրինել է համայնքի 2014 թ. բյուջեի մուտքերը և նպատակային օգտագործումը:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

1. Հողի հարկ 240.5 հազ. դրամ
2. Գույքահարկ 1420.4 հազ. դրամ
3. Գույքի վարձ. վճար 280.0 հազ. դրամ
4. Դոտացիա 18893.7 հազ.դրամ
5. Տեղական տուրքեր 80.0 հազ.դրամ
6. Հողի վարձակալություն 238.0 հազ,դրամ
7. Տեղական վճար 13.5 հազ,դրամ

ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍ

1.Տեղական ինքնակառավարում 10176.0 հազ. դրամ

3.Կրթություն և մշակույթ 1596.9 հազ. դրամ

4. Սոց. օգնություն 1520.0 հազ. դրամ

5. Երիտասարդական ծրագրեր 1007.6հազ. դրամ

6. Նախադպրոցական ուսուցում 4609.0 հազ. դրամ

7.աղբահանություն 566.5 հազ. դրամ

9.Ընդհանուր բնույթի ծառայություն 669.0հազ.դրամ

Գյուղապետարանը աշխատակազմի աշխատակիցների աշխատավարձերի և եկամտային հարկի գծով հաշվետու ժամանակաշրջանում ոչ մի պարտք չունի:

3. Պաշտպանության բնագավառում

Գյուղապետարանը տարածքային զինկոմիսարիատից ստացած ծանուցագրերը ժամանակին հասցնում է հասցեատիրոջը և հետևում է ,որ ժամանակին ներկայանան զինկոմիսարիատ:

Հատուկ ուշադրություն է դարձվում պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծմանը: Երիտասարդության շրջանում մեծ աշխատանքներ են տարվում ռազմահայրենասիրական ոգով դաստիարակելու գործում:

4. Քաղաքաշինության և հողօգտագործման բնագավառում

Ամենօրյա ուշադրության կենտրոնում է գտնվում և օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացնում հողերի նպատակային օգտագործման, ինչպես նաև ընդերքի օգտագործման վրա:

Անընդհատ աշխատանք է տարվում հողօգտագործողների հետ հողի հարկի, գույքահարկի գծով հարկերի հավաքագրման ուղղությամբ: Համայնքում մասնագետների մասնակցությամբ տրվել է անվճար խորհրդատվություն բույսերի պաշտպանության հարցում:

Գյուղապետարանը կազմակերպել է դաշտամիջյան ճանապարհների փոսալցման և հարթեցման աշխատանքներ, որի համար հատկացրել է 250,0 հազ. դրամ:

Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է հողամասերի չափագրման և սահմանների ճշգրտման աշխատանքներ:

5. Կոմունալ տնտեսություն և բարեկարգման բնագավառում

Համայնքում աղբաթափման աշխատանքները կազմակերպելու համար առաջին կիսամյակում փոխանցվել է 566.5 հազ.դրամ, այն կատարվում է շաբաթը մեկ անգամ: Համայնքում խմելու ջրի ջրագիծը շատ հին է և հաճախակի վերանորոգման կարիք է ունենում: 1-ի կիսամյակում խմելու ջրի ջրագծի համակարգի վերանորոգման համար ծախսվել է 500,0 հազ. դրամ:

Գյուղապետարանը մշտապես աջակցում է էլեկտրամատակարարման, խմելու ջրի սպասարկման, ոռոգման ջրի մատարկարարման, գազամատակարարման ծառայությունները իրականացնող աշխատակիցներին:

6. Կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում

Գյուղապետարանը առաջին կիսամյակում համայնքի մանկապարտեզին հատկացրել է 4609,0 հազ.դրամ սուբսիդիա՝ աշխատավարձ , սնունդ և այլ ծախսեր կատարելու համար, գյուղապետարանի կողմից մանկապարտեզի համար ձեռք է բերվել 600,0 հազ. դրամ արժողությամբ սառնարան և ձայնարկիչ, մանկապրտեզի աշխատակիցներին ապրիլի 7-ի կապակցությամբ նվիրել է 80,0 հազ. դրամ արժողությամբ նվերներ:

Մշակույթի տանը գործում է պարի, ըմբշամարտի և նկարչական խմբակներ: Գյուղապետարանը աջակցում է նշված խմբակների ծառայությունները նորմալ կազմակերպելու համար:

Մշակույթի տանը տեղավորված է նաև գրադարանը, որն ունի 7920 կտոր գրականություն:

Գյուղապետարանը կազմակերպել է մայիսի 9-ի և «Հանրապետության օրվա» նվիրված միջոցառումներ, ծաղկեպսակներ են դրվել զոհված ազատամարտիկների շիրիմներին և հուշարձան համալիրին, որի համար ծախսել է 475,0 հազ. դրամ:

Առաջին կիսամյակում գյուղապետարանը «Կանանց միջազգային օրվա» և «Մայրության, գեղեցկության օրվա» կապակցությամբ՝ գյուղապետարանի, «Կրթություն և Մշակույթ» միացյալ տնօրինության և «Առատաշենի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կին աշխատակիցներին հատկացրել է 135,0 հազ. դրամ արժողությամբ նվերներ:

Գյուղապետարանը դպրոցի գերազանցիկ և ուսման բարձր առաջադիմություն ունեցող երեխաներին հատկացրել է 200,0 հազար դրամական պարգևատրություն, 2014թ. շրջանավարտների համար կազմակեպված միջոցառման՝ մեկ օրվա հանգիստը Սևանում, հատկացրել է 350,0 հազ. դրամ:

7.Սոցիալական ծառայության բնագավառում

ՈՒշադրության կենտրոնում է սոցիալապես անապահով և զոհված ազատամարտիկների ընտանիքները, որոնց տրվում է ֆինանսական օգնություն: Առաջին կիսամյակում համայքի 44 սոցիալապես անապահով և նորածին երեխաների ծնողներին տրվել է 1320,0 հազ. դրամական օգնություն:

Գյուղապետարանը համայնքի հանգուցյալների համար կազմակերպում է դիակառքի և ծաղկեպսակների ծառայություններ: 1-ին կիսամյակում այդ ծառայությունների համար հատկացրել է 330,0 հազ, դրամ:

Համայնքում գործում է «Խնամակալության և հոգեբարձության» հանձնաժողով, որի հիմնական խնդիրն է անօթևան երեխաների հայտնաբերումն ու դաստիարակումն է:

Համայնքն ունի 302 թոշակառու և 50 նպաստառու, որոնք ժամանակին ստանում են իրենց գումարները:

Բուժ. ամբուլատորիան կահավորված է ժամանակակից սարքավորումներով, համայնքի բնակչության բուժ. սպասարկումը գտնվում է բարձր մակարդակի վրա:

8. Գյուղատնտեսության բնագավառում

Տարածքային վիճակագրական վարչություն է ներկայացվել ցանքաշրջանառության, պտղատու և խաղողի այգիների ստացված բերքի վերաբերյալ հաշվետվություններ: Համայնքում կազմակերպվում է անասունների և թռչունների հակահամաճարակային պատվաստումներ:

Գյուղապետարանը աջակցում է գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը, աջակցում է ձեռք բերելու պարարտանյութ և դիզ,վառելանյութ: Մարզպետարանը համայնքին հատկացրել է 115 տոննա ազոտական պարարտանյութ և 30.2 տոննա դիզ. վառելանյութ:

ՈՒշադրության կենտրոնում է պահվում աճեցրած բերքի իրացման աշխատանքները:

Հիմնախնդիրներ

1. Առատաշեն գյուղի հիմնական հիմնախնդիրը համարվում է խմելու ջուրը:

2. Ակնալիճ ջրանցքով ոռոգվող հողատարածքների ոռոգելու խնդիրը:
3. Մանկապարեզի շենքի վերանորոգումը:

Համայնքի ղեկավար Վ.Հարությունյան